



# Կրճատեք Էներգիայի օգտագործումը ձեր տանը

Էներգաարդյունավետությունը գերակա ուղղություն է ԵՄ-ի համար, որը ֆինանսավորում է մի շարք նախաձեռնություններ՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանում Էներգիայի օգտագործման ծավալների կրճատման ուղղությամբ:

Էներգաարդյունավետությունը սկսվում է տնից: Բազմաթիվ միջոցներ կան, որոնք Էժան են կամ առհասարակ ծախս չեն պահանջում, սակայն ձեր Էներգետիկ ծախսերում ահռելի խնայողություն են ապահովում:



## Մի քանի պարզ և Էժան խորհուրդ



**Անջատեք հեռուստացույցը և այլ սարքավորումները:** Տեխնիկական սարքավորումները «սպասման» ռեժիմում օգտագործում են իրենց հզորության **75%-ը**.



**Լամպերը փոխարինեք LED-երով՝** կատարելով մինչև **40%** խնայողություն՝ լուսավորման ծախսերում: Ըստ հնարավորության օգտագործեք բնական ցերեկային լույս:



**Հազուստի լվացքը կատարեք ավելի ցածր ջերմաստիճանով:** Լվացքի մեքենաների օգտագործած էլեկտրաէներգիայի **90%-ը** բաժին է հասնում ջրի տաքացմանը.



**Ձմռան ամուր փակեք պատուհաններն ու դռները և ժապավեն կպցրեք դրանց արանքում,** որպեսզի խուսափեք ջերմության **11%-ի** կորստից.



**Ջեռուցման մարտկոցներն ազատեք խոչընդոտներից,** քանի որ դրանք կլանում են ջերմությունը.



Ամռան օդորակիչ օգտագործելու փոխարեն **պատուհանները ծածկեք վարագույններով՝** պահպանելով սառնությունը.



**Լոգանք ընդունելու փոխարեն ցնցուղ ընդունեք և կատարեք տաք ջրի խնայողություն՝ 60%-ի չափով:**

\* Ներկայացված ցուցանիշները միջինացված են և, հետևաբար, նշված Էներգետիկ խնայողության ծավալները կարող են տատանվել

